

կանին հարուածներուն եւ կամ յօգուտ բարեփրական նպատակներու փողոցէ փողոց թափառող գիշերի երգեցիկ խմբակներու ցայգային աղելուններու ի լուր:

Կէս օրուան ճաշը՝ խաղի սեղաններուն շուրջ գաւառին կեանքը յոյժ գեղեցիկ ու երանաւետ բան մը կը պարունակէ իր մէջ: Հայրենի կոուրին անկեղծ սիրաբերմ զգացումներ անոնք անհոծօրէն մէկգմէկու կը զօգեն, կը կապեն, կը միացնեն ու կը նուիրագործեն անոնց այդ հրեշտակային շնաշխարհիկ հաւաքոյթը:

Գուրսը՝ ստահակ լաճերու եռփող խուժանը մայրներուն շարժուն թոհուրոհին մէջ կը պոռայ, կը զգայուի ու կը շահատակէ: Այս վերջինները զատկուան հաւկթի սովորական փողոցային պայքարներու բոլորանուէր բախտախնդիր խմբակը կ'ամբողջացնեն գերազանցապէս:

Ետ միջօրէին՝ շնորհաւորական փոխադարձ այցելութիւններու ծայր կուտան. ու իւրաքանչիւր որ կ'աճապարէ իր ծանօթներուն կամ մտերիմներուն սեմը ափ առնել: Այցելունները պատուասիրելու համար բերուելիք մէկէ աւելի անուշեղէններու տեսակներուն հետ փսեններուն մէջ պիտի տեսնուի նաեւ զուտ տեղական արտադրոյթ եղող թուփի բարկ օղին:

Եկեղեցական պաշտօնեաներէն իբր նմոյշ, քահանայներ ալ անմասն չեն մնար զատկուան այս ընթացիկ իրադարձութիւններէն. քանի որ տուն օրհնէքի ծիսակատարութիւնները հասուածաբար պարագանք են ինքնին շահագործելի. այսպէս ամէն տուն իրեն առանձնայատուկ աղօնի առձեռն փութատար հողէ կծիճներն ունի, ուր հացի թթուին գունտը անվթար կը պահպանուի, եւ որուն վրայ տէր հայրը քանի մը գլուխ աւետարան ընթերցելէ ու քանի մը հատ ալ նշխար դնելէ յետոյ պահպանելով մը կը լրացնէ այս աւանդական արարողութիւնը:

Տակաւին կ'արժէ յիշատակել իբր զատկուան կիւրակէին լրացուցիչ ու յաւելածական բաժիններ՝ երկուշաբթի եւ երեքշաբթի մեծերցի օրերը, ուր սոսուարխուռն երկսեռ բազմութիւն մը իր մեծընտանիքի կ'այցելէ կորաքամակ ու արտասուածքով, ղեւ ինչեւ յիշեր տեսած ըլլալ պատկեր մը այնքան հոգեցունց, ու այնքան տպաւորական, քան իրենց սիրոհատորներուն, որդիքներուն վրայ աղօթող գաւառացի մայրիկներու զգայացունց ու գլխահակ այն երեսօյթը, որուն տիրական արտաքինին առջեւ ամենէն անտարբերն իսկ, գողցեն պահ մը անոնց

ներքնայոյղ ցաւերուն ու տառապանքներուն հետ կը նոյնանայ, ինչպէս ինքնաբերական բաղձանքը կ'ունենայ քանի մը աղօթք ալ ինք միմեջեւ անոնց մեռելներուն ետեւէն ...

Հ.Մ.Ն.Դ. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ



Ի ՐԱՒԱՐԱՆ ԱԿԱՆ

ՄԻԹՐԱՐ ԳՕԹԻ ԳՆՏՈՍՏՆԵՐԳԻՔԸ ԵՒ ՀՆՅՈՅ
ՀԻՆ ՔՈՂՈՔԵՐԵՐԵՐԸ ԻՐԱՆԻՆԻՔԸ

ՀԱՏՈՒՆԵՐ ԵՐՐՈՐԴ

ՔԱՂԱՔԱՍՏԻԱԿԱՆ ԻՐԱՆԻՆԻՔԸ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԸՆԴՈՒՆԵՐԻՆԵՐԻ:

— (Հարան-հարան)

Բ.

Հարան-հարան:

I.

Այժմ շօշափէք ընչական իրաւունքի միայլ մասը, այն է հողային տիրապետութիւնը: Միւթար Գօշն այստեղ էլ չի տալիս բաւարար տեղեկութիւններ, ուստի ստիպուած կը լինենք շատ անգամ յանգել ենթադրական եզրակացութիւններին:

Հին Արեւելքի ամբողջ պատմութեան մէջ հողը, իբրեւ անշարժ ստացուածք բացառապէս թագաւորների եւ ընդհանրապէս գերագոյն իշխանների սեփականութիւնն էր համարուում: Նոյնն էր նաեւ հին Հայաստանի պատմութեան մէջ: Այստեղ հողը, ընդհանրապէս երկիրը, տեսականօրէն համարուում էր թագաւորների սեփականութիւն, իսկ իրականօրէն, բացի թագաւորներից հողի սեփականատէր էին ծանաչուում նաեւ նախարարները, բեկշէները եւ այլ տիրող իշխանները, բարձր հոգեւորականութիւնը յանձին կաթողիկոսական տան, եպիսկոպոսական աթոռների, վանքերի եւ նոյնանման հոգեւոր հիմնարկութիւնների: Հողային սեփականութեան գաղափարն իւր սկզբունքով մարմնանում էր թագաւորի անձի մէջ: Թագաւորն արդէն իւր կողմից կարող էր հողատիրութեան իրաւունք տալ նախարարներին եւ այլ մարմնաւոր ու հոգեւոր իշխաններին, սրանց բաշխելով

1 L. Felix, Entwicklungsgeschichte des Eigentums. IV. Teil. Erste Hälfte, Nr. 123-217.

Հողեր կամ իրրեւ ժառանգական սեփականութիւն, նման միջնադարեան աւատական կազմի foedusին կամ թէ ժամանակագոր սեփականութիւն նման beneficiumին: Ըստ այնմ էլ առաջին դէպքում հին հայտնութեան իրաւունքը Հողերն անուանում է հայրենի կամ հայրենիւն, իսկ երկրորդ դէպքում՝ պարզեւն՝ «... երկիրք, եթէ հայրենիք, եթէ պարզեւականք եւ եթէ քսակագինք»¹ Ժամանակի ընթացքում ըստ երեւութի պարզեւական երկիրը երկարատեւ տիրապետութեան շնորհիւ դառնում էր հայրենական եւ դասւում էր նախարարական ու ընդհանրապէս իշխանական տների ժառանգական սեփականութիւն, քանի որ հին Հայաստանի նախարարական ամրող կազմը հիմնուած էր աւատական-հողային տիրապետութեան ու ծառայութեան սկզբունքների վրայ:

Աւատականութեան առանձնայատուկ բնութիւնը շնորհիւ հողատիրութիւնը նախ՝ պայմանական էր, երկրորդ՝ կապուած էր «ծառայութեան» հետ եւ վերջապէս կրում էր դաշինքային բնուորութիւն: Հայ հողատիրութեան պայմանականութիւնն երեւում է նրանից, որ թագաւորը, ինչպէս տեսնում ենք պատմական փաստերից, շատ անգամ որպէս senior խլում էր իւր ստորագրեալ իշխաններից, իբրեւ վասսալներից, նրանց երկիրը, հողերը, նմանապէս իրաւունք էր համարում միջամեծելու նախարարների ժառանգման իրաւունքներում. «ամենայն հայրենի գաւառք հաստն ի նոցանէ»²

Հայ պատմագրների հաղորդածներից եզրակացնում ենք, որ նախարարներն, բզեշխներն եւ այլ իշխանները համարւում էին «ծառայք, թագաւորի. եւ այդ՝ «ծառայութիւն», համանիշ է միջնադարեան Եւրոպայի ֆեոդալների servitiuumին. «ապստամբաց յարքայէն մի ի ծառայից նորա մեծ իշխան Աղծնեաց...»³ «կայր բզեշխն վաղինակ ի ծառայութիւն արքային»⁴

Հողատիրութեան պայմանականութիւնն ու կապը «ծառայութեան» հետ անհրաժեշտօրէն առաջադրում են իշխան-հողատերերի փոխադարձ եւ դէպ ի թագաւորը եղած՝ յարաբերութիւնների հողային սեփականութեան դաշինքային բնութիւնը: Առանց դաշինքային համաձայնութեան, «առանց» որոշելու իւրաքանչիւրի ստանձնած պարտականութիւնները, որոնք ծագում են հողին տիրելու եւ իւր սեփականու-

թիւն ճանաչելու մոմենտից, չէր կարող գոյութիւն ունենալ այն պետական օրէնքայական կազմը, որը հիմնւած լինելով աւատականութեան սկզբունքի վրայ, դարձել էր Հայաստանի նախարարական եւութեան բնորոշ յատկանիշը: Գտնելով հին Հայաստանում աւատականութեան նշին երեք վերոյիշեալ պայմանները, որոնք յատուկ էին նաեւ միջնադարեան Եւրոպայի ֆեոդալականութեանը, եզրակացնում ենք, որ յիշատի միայն թագաւորն էր ճանաչում հողի սեփականատէր, նրան է պատկանում հողերի տնօրինութեան բացարձակ իրաւունքը:

Հողատիրական այդ սկզբունքները, իբրեւ հին Հայոց նախարարական իրաւունքի միացորդներ, շատ քիչ տարբերութեամբ պահպանուել են նաեւ այն ժամանակները, երբ ծնունդ առաւ Մխիթար Գօշի Դատաստանագիրքը:

«Հող միայն է թագաւորի եւ իշխանի, ասում է Մխիթար Գօշը (II, գլ. V, եր. 315): Իբրեւ հողի միակ սեփականատէրեր նրանք տալիս է նայդ հողերը ուրիշներին. թագաւորները իշխաններին. «Թագաւոր իշխանի տուեալ գաւառ...» (II, գլ. V, եր. 317): Իսկ իշխաններն էլ իրենց կողմից գլխաւորապէս գիւղացիներին: Այդ գիւղացիները կապւում էին հողի հետ, դառնում էին ճորտեր եւ կոչւում էին շին-շին բառով: Շինականներն, իբրեւ մի սոցիալական կաթնքի գործի շատ հին ծագումն ունին հայերիս մէջ:

Թէ ինչ իրաւաբանական-տնտեսական յարաբերութիւններ գոյութիւն ունէին գիւղացական դասի եւ հասարակութեան միւս դասերի, բացառապէս իշխանների, հոգեւորականների եւ այլ ազնուականների հետ, խիստ աղօտ պատմական տեղեկութիւններ կան: Մի բնորոշ փաստ աներկրային է, որ գիւղացիութիւնը, այսինքն շինականութիւնը, հանապազ հակադրւում է հայ պատմագիրների մէջ՝ «ազատներին»: Շինական բառին հոմանիշ գործածում են մեր պատմագիրները նաեւ ֆեւել-ի, ֆեւիլ խօսքերը:

II.

Հայոց Դատաստանագրքում էլ իշխաններն-ազատները հակադրւում են շինականներին, որոնք յիշատի գուրկ են ազատութիւնից, ճորտացած են եւ կապուած հողին: Դա երեւում է հետեւեալ յօդուածից. «Ազատ Արարչէն եղեւ մարդկային բնութիւն, այլ ծառայել տեւրանց յաղապս պիտոյից եղեւ հողոյ եւ ջրոյ (II, գլ. Գ.), կամ մի այլ հետաքրքիր յօդուած»

¹ Եղիշէ՝ պատմութիւն. 1893, Վենետիկ, եր. 159:

² Եղիշէ, եր. 312:

³ Փաւստոս Իբիզանց, եր. 21:

ծից, որ վերցրած է Դուռնի Ժ Ժողովի Թ Կանոնից, «Ազատք յորժամ զհրաբանց զերդ եւ զմարդ բաժանեն, յողովք շարահմութեամբ առնեն եւ զմանկունս եկեղեցւոյ ըզնանս ծառայս առնել եւ ի ստրկութեան ունին, որ չվայելէ քրիստոնէից, քի երիցս երանելոյն սրբոյն Գրիգորի եւ երանելոյն Տրդատայ Թագաւորի զսուրբ եկեղեցւոյն զժառանգութիւնն ընդ այլ ազատաց տունս կարգեալ է եւ ազատ էին սրբոյ եկեղեցւոյն հողովն եւ ջրովն: Եւ ի պարսից Թագաւորութեան ժամանակ Թէպետեւ ի պեկար արկին, անկայն տունն ի գիւհանի յայտնի է եւ չէ խառնեալ ի շինականս» (Ա, ԳԼ. ԺԶ.):

Վերջին հատուածից պարզ երեւում է, որ «ծառայս առնել», «ի ստրկութեան ունին», եւ վերջապէս «շինական», խօսքերը գործ են ածուում այստեղ հոմանիշ մտքով, այն է ազատութիւնից զուրկ մարդիկն են ի նկատի առնւած եւ ընդ սմին հակադրուում են «ազատին»: Ինչպէս Դատաստանագիրքը, նմանապէս շատ անգամ հին հայ պատմագիրները շինականներին հաւասարացնում են ստրկութեան հետ: Ինքն ըստ ինքեան ստրկները, որոնք անշուշտ գոյութիւն ունէին հին Հայաստանում եւ որոնց գոյութիւնն ընդունում է նաեւ Հայոց Դատաստանագիրքը, ինժական էին ամբողջովն իրենց տէրերին եւ, հլու ծառայութեան լուծը տանելով, զուրկ էին ազատութիւնից. միւս կողմից՝ շինականներն էլ իրենց ծառայութիւնով նստած լինելով տէր-իշխանների սեփականութիւն համարուած հողերի վրայ, նմանապէս զուրկ էին ազատութիւնից: Այդ անազատութեան բնորոշ գիծը, որ ընդհանուր էր Թէ շինականներին եւ Թէ ստրկականներին, առիթ է տալիս դատաստանագրքի հեղինակին գրելիք նոյնանիշ մտքով ըմբռնել երկու հիմնովին տարբեր հիմնարկութիւնները՝ շինականութիւնն եւ ստրկութիւնը:

Յամենայն դէպս շինականները հեռու էին բացարձակ ստրկութեան (servus) գրութիւնից, որը ինչպէս յայտնի է գոյութիւն ունէր մեծ մասամբ առանց կապ ունենալու հողի վրայ նըստելու հարցից: Մինչդեռ շինականն աներեւակայելի է առանց հողի, որի հետ նա ըստ իւր իրաւական-սոցիալական էութեան կապուած է եւ որով պայմանաւորուած է նրա անձնական գոյութիւնն ու նրա պարտաւորութիւնները իւր հողատիրոջ նկատմամբ: Վերջապէս այն հանգամանքը, որ շինականները որոշ պայմաններում կարող էին բաշխուած լինել յայտնի հողաբաժիններով ու մասնաւոր արտօնութիւններով,

որոնց մասին յետագայում կը խօսիք, մի նոր ապացոյց է, Թէ շինականութեան էութիւնը չպիտի խառնել ստրկութեան հետ: Հայ շինականները մասամբ մտտիկ նմանութիւն ունին բիւզանդական իրաւունքին յայտնի coloni adscriptitii կամ ἐναπογραφοί անուանած գիւղացիների հետ¹:

Ուրեմն շինականները կապուած ու ամրապնդուած էին հողի հետ. նրանք անազատ էին: Այդ մասին ասում է Մխիթար Գօշը, որ Թէ եւ «ազատ Ալրարէն եղեւ մարդկային բնութիւն», բայց հողի եւ ջրի կարիք ունենալով, գիւղացին ծառայում է տիրոջ, այսինքն լինելու է ճորտ: Այդ ճորտութիւնը, կամ ծառայութիւնը, որ հոմանիշ է միջնադարեան ֆեոդալականութեան servageին, ժառանգական էր: Դա բացայայտ է Հայոց Դատաստանագրքի այն խօսքերից, որոնք վերաբերում են իւր տիրոջ հողը թողնող ու հեռացող շինականին, երբ վերջնաւոր զուակներն. «եւ զայս պատշաճ կարծեմ դատաստան (Սինոդի եւ Էքզիստենի Թ. 488 եւ 749 ձեռագիրները փոխանակ այս նախադասութեան պարունակում են աւելի հասկանալի միտք՝ «եւ որ ոչ ունիցին ջուր եւ հող որ...») — զի թողեալ զտէրութիւնն ազատ է ուր եւ կամենցի կալ: Ապա Թէ այսմ ոչ ներէ որ ի տէրանց եւ բռնադատէ զգնացեալսն անդրէն դառնալ, զկնի մահուան հօրն ազատ են որդիք ծնեալք այլուր եւ ոչ անդ;»: Հետեւապէս տիրոջ հողից դուրս ծնուածներն իրենց ճորտ-հօր մահուանից յետոյ ազատ են ծանաչում, իսկ ընդհակառակն՝ տիրոջ հողի վրայ ծնուածները շարունակում են նոյն ճորտը համարուել, ինչպէս եւ իրենց ծնողը:

Մխիթար Գօշի վերոյիշեալ խօսքերից եզրակացնում ենք, որ շինականը կարող է թողնել «զտէրութիւնն» եւ ազատ է, ուր կամենայ, գնալու: Սակայն պետք է ենթադրել, որ դա կարող էր տեղի ունենալ, ինչպէս երեւում է Հայոց Դատաստանագրքի ուրիշ ձեռագիր վարիստներից, այն ժամանակ միայն, երբ շինականները «ոչ ունիցին ջուր եւ հող»: Իսկ «Թէ այս ոչ ներէ որ ի տէրանցն» խօսքերից, եզրակացնում ենք, որ տէրերը կարող էին իրենց շինականներին ազատել ճորտութիւնից ու ծառայութիւնից:

Անշուշտ շինականութեան այդ բնորոշ յատկութիւններն, Հայոց Դատաստանագրքի հե-

¹ Zachariae — Geschichte des römisch-griechisch-Rechts, Կ. 222—225:

ղինակն իւրացրել էր իրականութիւնից եւ տիրող սովորութեան իրաւունքից: Հինականների անազատութիւնն, ճորտութիւնն գտնում ենք նաեւ այն բազմաթիւ յիշատակարանների, արձանագրութիւնների մէջ, որոնք մեզ հասել են Հայաստանի, գլխաւորապէս միջնադարեան պատմութիւնից: Անոյ¹, Հաղբատի², Հիրակի³ եւ այլ բազմաթիւ արձանագրութիւնների մէջ միշտ յիշատակուում է, թէ այս կամ այն հայ իշխանը, պատրօնը վանքերին եւ այլ բարեգործական նպատակներով նուիրում է որոշ հողամաս իւր ճորտերով հանգրեւի:

III.

Հինականները, իբրեւ սոցիալական խմբակցութիւն, որ հետեւանք էր հին Հայաստանի հողատիրական - աւատական առանձնայատուկ սիւսեմի, կապուած էին իրենց տէրերի հետ ոչ միայն իրաւաբանօրէն, այլ եւ տնտեսականապէս: Ամրացած ինքնով իրենց գոյութեամբ կալուածատիրոջ հողի հետ, նրանք այդ հողից օգտուելու համար որոշ պարտաւորութիւններ ունէին իրենց տէրերի վերաբերմամբ: Ի հարկէ այդ բոլոր պարտաւորութիւնները զուտ տեղական բնաւորութիւն ունէին եւ հաստատուել էին սովորութեան իրաւունքով: Այնուամենայնիւ այդ պարտաւորութիւնների հասարակական - տնտեսական բնոյթը կանուած էր կալուածատիրոջ անհատական դրութիւնից. այդ պարտաւորութիւնների չափն ու սահմանը որոշուում էր մեծ մասամբ ուժեղի իրաւունքով:

Միւրիւր Գօշը մի առ մի յիշատակում է այդ պարտաւորութիւններից շատերը, որոնց հիման վրայ մատուոր գաղափար ենք կազմում շինականների ու կալուածատէր-իշխանների միջեւ տիրող տնտեսական - սոցիալական յարաբերութիւնների մասին:

1. Հալբատի: Հինականները վճարում էին իրենց տէրերին որոշ հարկեր: Իբրեւ սկզբունք ընդունուում է՝ անդատաններից վերցնել հարկ, բերքի հինգերորդ մասը: Այստեղ Միւրիւր Գօշը փորձում է հիմնաւորել այդ օրէնքը նրա՝ Նով, որ այդպէս « Յովսէփ օրինակով այն գիւղացու, զի յորժամ ստացաւ զբերկին փարաւնի, յայժամ զհինգերորդ կարգեաց » (II, գլ. V, 315):

Սակայն այդ հնչեւէլ շինականներից պահանջուում էր միմիայն ջրարբի անդատաններէ, իսկ անջրդի անդատաններից մի որոշ. « Բայց անդատանք ջրարբիք՝ լիցին ընդ հնգեկաւ, այլ ոստիք տասնորդեցնին » (Անդ): Ցասնորդ էր վերցուում նաեւ այգիներից, հաւաստաններից եւ այլ պտուղներից: Մի այլ անդ էլ յիշատակուում է, որ շինականները ժողոված պտուղների համար տասնորդ են հատուցանելու. « Հինականաց իրաւացի է տասնորդել օտարացն ի կիծել պտղոցն, որ ոչ իւրեանց իցէ, այնոցիկ՝ որոց իցէ սահմանն եւ ըստ ինդրոյ նոցին կամեք եղցի » (II, գլ. Ժ): Նմանապէս շինականները վճարում էին հարկեր որոշ անասունների համար. « ոչխարք ի գառիմն տասնորդեցնին », նաեւ « կովու լիւր եղն միայն լիցի »: Իսկ որոշ կենդանիների, ինչպէս օրինակ՝ եղն, ձիու ջրու եւ էջի համար հարկեր չէին վճարուէր, որովհետեւ շինականը նրանց աշխատանքը գնում է անդատանների վրայ եւ այդպիսով արդէն կարողանում է վճարել հնգեկալը. « զի այն իսկ է զոր աշխատեալ հնգեկալ » (Անդ):

Ըստ երեւոյթիւն բացակայում էր գլխահարկը. միայն ոչ-քրիստոնեաները, որոնք զենքի ոյժով էին հպատակուած, պարտաւոր էին գլխահարկ վճարելու:

2. Անդ-իւն Ժօր-յօնի-ն: Հինականները պարտաւոր էին շաբաթուայ մէջ՝ 7 օրից մէկը բանել ու աշխատել իշխանի համար (II, գլ. V, 315):

Արեւիշխալ պարտաւորութիւնները խիստ ընդողջ են այն տեսակէտից, որ ոչ միայն Միւրիւր Գօշի ժամանակները, այլ եւ նրանից առաջ, տակաւին Հայաստանի հին պատմութեան մէջ, նմանապէս նրանից յետոյ մինչեւ նախնիներից դարերի վերջը գտնուում ենք հայ գիւղացիութեան տնտեսական պայմաններում: Այդ պարտաւորութիւնները յայտնի են նաեւ հալբատի անունով եւ իրենց բնոյթը պահպանել են շատ քիչ փոփոխութիւններով սկսած Հայոց պատմութեան 7րդ դարից: Ինչպէս օրինակ Գունայ ժողովի (641 թ.) սահմանած Ը. կանոնի մէջ հանդիպում ենք. « սակայն զկէս շնորհին կալցի յաղազս ձեռնարկութեան, ազատ ի հարկէ եւ ի բեկարէ »: « Հնգեկալ եւ տասնորդն տեսակի հարկերի մասին բազմաթիւ փաստեր ենք գտնում Բագրատունեաց՝ եւ Կի-

¹ Աճօ-Մուրճ, 1803 թ.:

² Մարտառ, 1886 թ. էր. 524-525:

³ Անդան-Հիրակ, էր. 20, 126: Համմա, նաեւ Կիւիկեան ջրմանի ճորտատիրութեան վերաբերեալ հետաքրքիր հրոմբարակը չէթոււմ Ա. Թադաւորի. « Սիւսեմ », էր. 207

¹ Անդան-Հիրակ, էր. 40, 62:

լիկիոյ՝ Տարսուութեանց շրջանում։ Սա ապացոյց է, որ այդ ձեւի Տարկերը ոչ թէ օտարամուտ, այլ սովորական ու պատմական երեւոյթ էին Տայ իրականութեան մէջ։

Վերջապէս կոռ ու բեկարի մասին կան բաւականաչափ տեղեկութիւններ Տայ գիւղացիութեան մասին Ղարաբաղի Մեղիքների շրջանին, նմանապէս խաների Հայաստանին տիրապետած օրերին վերաբերեալ պատմութիւնից, երբ միւլքարաբան եւ այլ անուններով յայտնի գիւղացիները, գտնուելով ճորտական դրութեան մէջ, կոռ ու բեկարով էին կապուած իրենց իշխանների հետ։ Այդ անձնական ծառայութիւններն ու Տարկերը, ինչպէս յայտնի է, պահպանուցին որոշ չափով նաեւ այն ժամանակները, երբ ուռններն արդէն տիրապետեցին Կովկասը։

IV.

Չնայած, որ շինականները Հայոց Դատաստանգրքի համաձայն գտնուում էին անազատների շարքերում, ճորտական դրութեան մէջ, այնուամենայնիւ նրանք օժտուած էին որոշ իրաւունքներով, որոնք յայտնի չափով մեղմացնում էին նրանց սոցիալական ծանր վիճակը։ Դատաստանագիրքը պարունակում է յատուկ իրաւական նորմեր շինականների անձնական իրաւունքների համար, որոնք կարծես յիշեցնում են բիւզանդական իրաւունքին յայտնի նորմերը *coloni liberi* կամ *ἐλεύθεροι μετὰ τὸν παραγάτων αὐτὸν* անունով կոչուած գիւղացիների վերաբերեալ։

Նախ եւ առաջ պէտք է յիշատակել շինականների այն իրաւունքը, որ նրանք կարող էին սեփականութիւն ձեռք բերել։ Կալուածատէր իշխանի իրաւունքը չէր կարող տարածուել շինականի սեփականութիւն դարձած գոյքի վրայ։ Դա պարզ երեւում է այն փաստից, որ Մխիթար Գօշն արգելում է Տարկ դնել շինականի գնած գոյքերի, այսինքն արդէն անձնական սեփականութիւն դարձած ընչքի վրայ։ «արծաթագին անդաստան եւ այգեստան եւ բուրաստան մի լիցի ընդ հարկաւ հնգեկի» (II, գլ. V. եր. 314)։ Շինականների սեփականտիրական իրաւունքին է վերաբերում նաեւ այն, ինչ որ նախորդ գլուխներից մէկում առիթ ունեցանք

արծարծելու աշխատանքի սկզբունքից բղխող սեփականութեան գաղափարի մասին։ Շինականը, ստանալով իր իշխանից անապատ կամ խոպան հողաբաժին (*sterilia*), երբ իր անմիջական ջանքերով մշակելի էր դարձնում այդ հողը, այն ժամանակ նա ձեռք էր բերում սեփականութեան իրաւունք մշակուած (*fertilia*) հողաբաժնի վրայ։ Այդ *fertilia* շինականը կարող էր իրեն ժառանգութիւն իւր զաւակներին թողնել (II, գլ. V. եր. 317)։ Եւ շինականի տէրը իրաւունք չուներ խլելու կամ իւր քմահաճեցողով անօրինելու այդ հողաբաժինը, միայն «այլ փոփոխումն ի վերայ մեծի յանցանաց եւ իրաւացի լիցի, եւ մի ի պատճառս զըպարտութեան փոփոխիցին» (Անդ)։

Երկրորդ՝ Մխիթար Գօշն, նկատի առնելով շինականների կախումն իշխաններից եւ հասկանալով, թէ «ուժեղի իրաւունքը» ամենամեծ դերն է խաղում շինականների ու իշխանների փոխադարձ յարաբերութիւնների մէջ եւ առիթ է տալիս բազմաթիւ ճշշումների, մի շարք կանոններ է մշակում եւ կարծիքներ յայտնում շինականների բարբորութեան համար։

Դատաստանագիրքն արգելում է տէրերին բարձել շինականների վրայ սահմանած չափից աւելի աշխատանք։ Իշխանը չպէտք է պահանջէ, որ շինականը շարաթիւսն մի օրից աւելի աշխատի նրա օգտին։ «այլ աւելի աշխատեն զձեռամբ անկեալն անիրաւութիւն մեծ է»։ Նմանապէս «ի տարեմասու ըստ կարի ծառայեսցէ եւ յաւուրս տնից» (II, գլ. V. եր. 316)։ Տէրերն օգտուելով իրենց իշխանութիւնից չպէտք է կեղեքեն ու յափշտակեն շինականներին։ «Մի լիցի չէք-ուչէք բազում, այլ չէք լիցին անիրաւ սովորութիւնքն, զի եւ սահմանդ բազում եւ յաւելորդ սովորութեանց եղեւ» (Անդ)։

Իշխաններն իրենց շինականներին թեւեւամտօրէն եւ ինքնագլուխ պատժելու չեն։ «առանց լիցի անգոտատանն մի տուգանեսցի, այլ ըստ կարի լիցի թէ յանցաւոր ի տէրութիւն գացի. իսկ յայլս յանցաւոր գտեսի, դատաւորօք վճարեսցի»։ Մխիթար Գօշն այնքան հեռու է գնում, որ շինականների կեանքի պաշտպանութեան համար վերապահում է նոյն քրեական-իրաւական նորմերը, որոնք գոյութիւն ունին ազանների կամ իշխանների կեանքի ապահովութեան նկատմամբ։ «Եւ եթէ աւելի ըստ զօրէն անգթութեամբ հրամայիցէ գործել եւ այնու փնաս մահու հասցէ ի տերանց ընդ հարկիւ անկերց, պարտաւ լիցի արեւն Գառնաթառնի քերթառնից Կերեւոյ, եւ ըստ

։ Մխիթար Օրբնիստանցի։ Գլ. V. «Եւ երբոր հարկուս սահմանն այս, որ զինչ Աստուած տայ հարկադին ի հինկն մէջն է»։ Նմանապէս տես Հրովատակի Հեթմայն Ա., Սիւռու և Սեփանի, եր. 207։

արժանւոյն զապաշխարանսն ցուցցեն խոնարհու-
թեամբ, եւ զայլսն ի փնասից զբժշկութեան եւ
ղնափանածոյն հատուցեն, եւ յանբժշկեցաց
զտուգանս, (II, գլ. ԺԴ):

Ի վերջոյ այն հանգամանքը, որ նոյն իսկ
ստրուկները, servus բառի նեղ իմաստով վեր-
ցրած, որոնք անշուշտ գոյութիւն ունէին հին
Հայաստանում շինականների կից, օգտուում էին
որոշ իրաւունքներով ու պաշտպանութիւնով տե-
րերի կամայականութիւնների դէմ, եւս առաւել
հիմք է տալիս եզրակացնելու, որ շինականները,
որոնց սոցիալ-տնտեսական վիճակը ստրուկների
հետ համեմատած անկասկած բարձր էր, ան-
պայման օժտուած էին իրենց անձնական պաշտ-
պանութեան համար այդ տեսակ իրաւական
միջոցներով:

Աւերա Գառաստանագրքի դրական իրա-
ւունքը իւր հովանաւորութեան ներքոյ է առ-
նում շինականներին եւ որոշ չափով ճանա-
չում է նրանց իրաւանց անձի նշանակութիւնը:

(Հարստութիւն)

ԴՈ. ՍԱՄՈՒԷԼԵԱՆ



ԼԵՁՈՒՍԲԱՆԱԿԱՆ

ՀԱՅԵՐԵՆԻ ԳԼԿՍ ԸՆԴԳԳՆԱԹԻՒՆ ՄԸ

Չեմ յիշեր երբեք որ հայերէն գիրք մը
առած ըլլամ ձեռքս եւ առաջին էջին սկսեալ
այնչափ նողկանք ու գարշանք զգացած ըլլամ,
որչափ այս վերջերս ունեցայ՝ «Արօր», անուամբ՝
յիշարթան հայերէնով գրուած ամսագիր մը ձեռք
առած աստեղծ Յիշարթան հայերէն ըսինք, արտաբերի
տեսնելով որ այս հայերէնը կը պաշտպանուի
Պր. Սա. Մալխասեանի պէս ուսումնականի մը
կողմանէ:

Առաջին կողմն վրայ եւ մը տեսայ,
«ճ, սխալաբան ամսագիր մին ալ», ըսի. բայց
սխալած եմ եղեր, որովհետեւ Չ սող ետքը՝
«Երկուցիւր-Երեւան, բառն եկաւ զիս համոզելու
որ հոս — յարստութիւն-Երեւան մը կայ:

Մինչեւ հոս պիտի հասնի եղեր յարստութիւն-
Երեւան, որ թշնամւոյն չորածը մեք մեր ձեռքով
պիտի կատարենք եղեր: Մենք պիտի ընդենք
եղեր հայերէնի հաստատուն ուղղագրութիւնն
եւ NB, մեր «համոզման հակառակ», եւ իրա-
պէս «յօք չինելու աստեղ, աչք հանելով», ...

Պիտի չլնամ եւ ցոյց տալ այս այլանգակ
ու տգիտական դրութեան սխալ հետեւութիւն-
ներն, որովհետեւ երբ երկու յառաջգիրներէն
եկած եզրակացութիւնը սխալ է, ըսել է յա-
ռաջագիրներու մէջ սովորականութիւն կայ: Կարժե՞
սովորականութեամբ հետ գիտականօրէն խօսիլ: Կար-
ժե՞ թագաւոր, լալ, Երկրպա, բալ, գրողներու
հետ վիճաբանութեան մտնել: Զատ է տեսու-
թիւն, եւ այս տեսութեան ընդունելի կամ
անընդունելի ըլլալուն վրայ վիճել, եւ զատ է՝
յանկարծ ինքնահար մտահանութեամբ, «յոյց
բարիս յիշարթան Երեւան», իբր հաստատեալ
օրէնք ընդունիլ եւ գործնականի մերձեցնել,
վանդալութիւններ գործելով՝ դարաւոր ուղղա-
գրութեան մը դէմ:

Ո՛րն է այս ուղղագրութիւնը: Վի եւ -ի
ուղղագրութիւնը: Այնպիսի կէտ մըն է այս,
որուն դէմ ստուգիւ առնեն քիչ կը սայթաքի
ոչ թէ գրողը, ոչ թէ գիտականը, ոչ թէ
հայերէնագէտը, այլ նոյն իսկ դպրոցական մը,
եթէ մէկ անգամ մեկնուի իրեն այս ուղղագրու-
թեան նանդը. եւ այսպիսի ուղղագրական հաս-
տատուն կանոնի մը դէմ մեղադնելով՝ ազատ
դուռ կը բացուի՝ «առաջն առնելը»: Եւ
ինչո՞ւ այս. որպէս զի հայերէն ուղղագրու-
թիւնը պարզի, դիւրանայ: Հետքահալ ենք
այնպիսի հայու մը հայերէնին, որ փոխանակ
հայերէն սորվելու, հայերէնն աղճատելու եւ
խառնակելու կը ձգնի. թող կտորէ գրիչը եւ
առնուր թիւը, ինչպէս կը մտադրենք որ ընէ
«Արօր», ալ. փոխանակ հայերէն լեզուի եւ
գրականութեան մէջ ծամածուռ փոսեր բա-
նալու, երթայ խոսկանացեալ եւ անձակ հողե-
րու վրայ նախ ակօս բանալ սորվի: Ապա թէ
ոչ կը մտադրեմ որ երկրորդ թիւը հրապարակ
ելլելու ատեն «Արօրին», խօփը ջարդուի, որ
գոնէ կրկին փնասուելէ ազատ ըլլայ հայ լեզուն:
Ես պիտի գոչեմ հայ ընթերցողներու hands off!
եւ ոչ ձեռք առնուք այսպիսի չինական ուղղա-
գրութեամբ հրատարակութիւն մը, որովհետեւ
խնդիր չկայ՝ արեւմտեան կամ արեւելեան լե-
զուաւ խմագրուած ըլլալուն վրայ, այլ մեր
աւանդական հայերէնի մէջ վանդալութիւններ
պիտի ներմուծէ: Ատանգին նախատես ըլլալու
է, քանի որ այս այլանգակ ուղղագրութեան
ձեռնարկողները չկրցան ըլլալ:

Գիտեմ, շատերը «Արօր», ձգած կորգերու
վրայ պիտի ծիծաղեն, եւ թերեւս զմեզ ալ մե-
ղադրեն, թէ ինչո՞ւ կարեւորութիւն տուինք՝
այսչափ իսկ գրելու. բայց, բայց, — հոս է որ